

դաճեցին փոքրամասնութիւն էին կազմում և հետեւաբար, ըստ օրինի, արդէն ինքնին կազմալուծուած էր:

Միւս խեղաթիւրումների մասին խօսելը ուրիշներին և՛ թոյնում:

Դոկտ. Մ. Փաշայեան

Ալեքսանդրիա 2/15 ապրիլ, 1905 թ.

II

Ատրպատականի նախկին առաջնորդ, գերապատիւ Տ. Եղիշէ ծ. վ. Մուրադեանը իր յանցանքը ծածկելու համար երևան է գալիս «Մուրճ»-ի 2—3 համարում, և «Ո՛վ փակեց Թաւրիզի Լիւաւա-Թաղի դպրոցները 1903—1904 ուսումնական տարուայ ընթացքում» վերնագրի տակ խմբագրութեանդ ուղղուած մի ընդարձակ նամակով, աշխատում է ըստ իրեն «փաստեր» և «գոյություններ» առաջ բերելով դպրոցների փակ մնալու մեղքը իր վրայից դրել, բայց ընդհակառակը, ունեւ շինելու անդ, աչքն էլ է հանում:

Եւ իբրեւ ակնաւորաւոր ամբողջ եղելութեան, և իբր տեղացի՝ գործին մասնակցողներին մէկը, առաջ և՛ գալիս միայն մի քանի փաստերով պատմելու բուն իրողութիւնը:

Ա. Հոգաբարձական ա. ընտրութիւնը, որի մասին ինչպէս ասում է առաջնորդը, ստիպուած է եղել լուծել ինչ որ «կեղծ ու անկանոն» խնդիրով՝ կատարուելէ հետեւեալ կերպով:

Հակառակ ժողովրդի ցանկութեան և հնաւանդ սովորութեան՝ Եղիշէ ծ. վ. Մուրադեանը, իրան յայտնի պատճառներով հոգաբարձական ժողով է նշանակում Ղաւա-Թաղի դպրոցի սրահում, փոխանակ Լիւաւայում նշանակելու, քանի որ հոգաբարձական կազմը Լիւաւայի համար պիտի լինէր, ժողովի կանչում են ծխականները դատ-դատ հրաւերներով, առանց որի ոչ-ոք իրաւունք չունէր մտնելու ժողովասրահը:

Հրաւերներ էր ուղարկուած միմիայն նրանց, ովքեր վճարել էին ինչ որ պըտղի կոչուած տուրքերը. իր ասածով Եղիշէ վ.-ը առաջնորդում էր «ծխական կանոնադրութեան» 12-րդ յօդուածով, բայց ըստ երևոյթին միայն այն կէտերով, որոնք իրան ձեռնտու էին. օրինակ, (տես ծխական կանոնադրութեան 12-րդ յօդ. գլ. դ.) «Նրանք, որոնք սովորոյթով ընդունուած ծխական ժողովից սահմանուած եկեղեցական տուրքերը չեն վճարել, այդպիսիները զրկուած են ձայնի իրաւունքից»: Նախ այդ կանոնադրութիւնը ժողովրդի սեփականութիւնը չէր և երկրորդ՝ «եկեղեցական տուրքեր» խօսքը շատ առաձգական է. եկեղեցին ունի բազմատեսակ տուրքեր, բայց Հայր Եղիշէն առըք ասելով ընդունում է միայն պտղին, որի վճարը իւրաքանչիւր ընտանիքի համար միջին հաշւով 2 դրան է, և ով չէր տուել, զրկուեց ձայնի իրաւունքից:

Հրաւեր ուղարկելիս՝ Հ. Եղիշէն առաջնորդում է մի ինչ որ տետրակով, որտեղ նշանակուած է լինում պտղի տուող ընտանիքների «մեծ»-ի անունը, որոնցից ջապերը քաղաքից բացակայ էին, շատերը տան մէջ փակուած դռամակ ծերունիներ և մի քանիսներն էլ միւս աշխարհ փոխադրուածներ: Այսպէս, օրինակ, հրաւեր է ստանում ժողովի մասնակցելու համար, Օհան Տէր-Ջաքարեան անունով մի հիւանդ ծերունի, որ մի քանի տարուց անկի է՝ փակուած էր տնում. իսկ առողջ դատողութեան տէր, խելքը գլխին 24—25 տարեկան որդին անտես է անւում: Հրաւերներ են ստանում Աղայեան, Յովհաննիսեան և այլ ծերունիներ,

որոնք սկի չեն էլ հետաքրքրում այլ գործով, բայց նրանց հետաքրքիր զաւակներին արգելում է ժողովի մուտքը. բայց, որ ամենից ընդունն է, ծիծաղելին, և միևնոյն ժամանակ այն ցաւալի իրականութիւնը պարզողը, թէ դրբից մարդիկ ինչպէս են կուրանում, հրաւէր է ուղարկում Բաքաշան Ստեփանեան անունով մի տասը տարուայ հանգուցեալի, մինչդեռ նրա 23 տարեկան տղան իրաւունք չունի ժողովին մասնակցելու:

Եղիշէ վարդապետին ձեռնառու չէր կատարել կանոնադրութեան այն կէտերը, որով արտօնութիւն է արւում բոլոր 21 տարեկաններին և 6 ամսից աւել Թաւրիզում ապրողներին մասնակցելու ժողովին. (տես հիմնական կանոնադրութեան յօդ. 10):

Համաձայն Եղիշէ վարդապետի կամքի՝ հրաւիրուեցան 3—4 անգամ ունեցող ընտանիքից միայն մէկ հոգի, և ժողովը գումարուեցաւ Ղալայի սրահում. արդիւնքը եղաւ այն, որ 450—500 տուն ունեցող Լիւալայի ծխականներից ներկայ էին ժողովին 46 հոգի: Ահա այդ օրինաւոր ընտրութիւնն էր, որ առաջնորդ Մուրադեանը չմի կեղծ ու անկանոն խնդրի պատճառով ստիպուած եղան լուծել ասում է:

Բ. Երկրորդ ընտրութիւնը, Հայր Եղիշէն, հակառակ իր կամքին, տեղի տալով ժողովրդի պահանջին՝ նշանակեց Լիւալայում, բայց դիմամբ ինքը չուզեց ներկայ լինել ժողովին, և նախագահ նշանակեց մի զաւաճեալ քահանայի, վստահ լինելով որ վերջինս չի կարող կառաւարել ժողովը և այդպիսով ընտրութիւն չբանալ ժողովը մինչև 80 հոգուց աւելի ծխականներ չլինեն և բոլորն էլ որոշ հասակից աւել. և անմիջապէս փակել ժողովը հէնց որ մի շնուկ լուռի:

Ժողովը բացուեց 120 ծխականներով և Եղիշէ վարդապետից աւելի կեանքի մէջ փորձառութիւն ունեցող քահանան շատ խելացի կերպով տարաւ գործը:

Ընտրութիւնը եղել էր այնքան կանոնաւոր, որ երբ արդիւնքը ներկայացրին առաջնորդին, վերջինս չկարողանալով զսպել իր հիացմունքն՝ ասաց, որ շքանից լաւ ընտրութիւն չէր կարող տեղի ունենալ:

Բայց Վկայր գործիքը մէջտեղն էր...». Եղիշէ վ.-ը կամեցաւ նոր բան սարքել և յաջողուեց իրան: Վրդովուած մտքերը հանգստացնելու համար, փոխանակ կանչելու նորընտիր հոգաբարձութեան և համոզելու նրանց որ իրանց պաշտօններին տէր կանգնեն, նա վարւում է ընդհակառակը...

Գ. Նա յայտնում է որ ժողովում ընտրուած հոգաբարձուներից երեք հոգին հրաժարւում են. լաւ. բայց ինչ՞ով հրաժարուեցին—այդ մասին ոչ մի խօսք: Այդ «երեք»-ից մէկն էր պ. Բաղդասար Մելիք-Սարգսեանը, որը ծանօթ է ինչպէս Թաւրիզի, այնպէս էլ ամբողջ Ասորայաաւանի հայ-հասարակութեանը, շնորհիւ թէ իր դիրքի և թէ անցեալ գործունէութեամբ որ ունեցել է նոյն այդ ասպարիզում: Այդ ժողովում նա ընտրուած է լինում 120 հոգուց միաձայն, ժողովականների բուռն ծափահարութեամբ. սակայն խաղաղութեան նախանձախնդիր վարդապետը առանց նրան կանչելու և յայտնելու իր ընտրուած լինելու մասին, համոզելու որ չմերժի և այլն, յայտարարում է որ պ. Բ. Մ. Սարգսեանը չի ընդունի հոգաբարձական պաշտօնը—առանց նրա երեսը տեսած լինելու: Այս յայտարարութեան վրայ հոգաբարձուներից ուրիշ երկու հոգի էլ հրաժարւում են իրանց պաշտօնից. և ապա միայն պ. Մելիք-Սարգսեանը իմանալով կատարուած իրողութիւնը, վշտանում է, և իսկապէս հրաժարւում:

Դ. Եղիշէ վ. Վեհափառ Հայրապետի թիւ 950 կոնդակը տակաւին չէր

ստացել որ ժողովրդին հրաւէր ուղղեց նոր-ընտրութիւն կատարելու. ժողովի օրը, երկրորդ ժողովում ընտրուած հոգաբարձուները երբ լսեցին Վեհափառի հրամանի մասին, չափազանց զարմացան տեսնելով որ Ե. Վ. -ի պահանջը բոլորովին հակառակ է նրան. (կոնգալը կամ ստացուած չէր և կամ և կամ եթէ ստացուած էլ էր երևան չէր հանուած մինչև այդ օրը)

Ե. Շատ ընտանիք էր Լիւլաւայի ծխականներէ բողոքակիր արձանագրութիւնը և շատ տեղին նրանց գործածած լեզուն: «Դասն տարուայ ուսուցիչն» պ. Գ. Զիլինկիրեանը, եթէ չենք սխալուում, Թաւրիզ է եկել 1894—95 թուերին իբրև տեսուչ Արամեան և Ս. Աննայեան երկսեռ դպրոցների. մի քանի տարի այդ պաշտօնը վարելուց յետոյ, զանազան պատճառներով զբոսելու է տեսչութիւնից և դառել հոսարակ ուսուցիչ, Իբրև ուսուցիչ նա պաշտօն է ունեցել և Լիւլաւայի դպրոցներում, որտեղ նրանից անբաւական լինելով մի տարուայ ուսուցչութիւնից յետոյ արձակուում են: Դարձեալ յաջողուած է նրան մանկ Դաւայի դպրոցը, բայց 1901—1902 տարուայ վերջում առաջնորդ Եղիշէ Վ. -ի ցանկութեամբ հեռացնում են նրան՝ պատճառարանով որ նա չափազանց կարճատես է: Ահա այդ քսան տարուայ ուսուցիչն» պ. Զիլինկիրեանն էր որ տեսուչ էր նշանակուած Լիւլաւայի դպրոցներին չայր Մուրադեանի կողմից:

Համաձայն կանոնադրութեան՝ ժողովը տեղի է ունեցել Լիւլաւայի սրահում, որտեղ կազմուել է և արձանագրութիւնը 86 հոգու ստորագրութեամբ—տակի շատ ծխականներից քան հոգաբարձական արձանագրութիւնն էր ստորագրուած:

Եւ այս պատգամաւորները, ինչպէս տեսնում է ընթերցողը, ընտրուել էին մի բազմադաս և կանոնաւոր ժողովում, որը տեղի էր ունեցել հասարակութեան ներկայութեամբ, և ոչ դռնէ-դռու պըտտեցեալ թղթի վրայ հաւաքած ստորագրութիւններով, ինչպիսին անում էին ոմանք...

Եւ ի՞նչ մեծ և մահացու մեղք են գործել աշակերտները, որ Եւս խոնարհ խնդրադրով դիմել են և ցանկութիւն յայտնել, որ 5 տարի շարունակ իրանց դաստիարակող ուսուցչական խումբը, որ այնքան շատ համակրանք և սէր էր ձեռք բերել թէ աշակերտների և թէ հասարակութեան մէջ—չփոխուի, մնայ նոյնը *):

Մ. Սահակեան

III

Լիւլաւայի դպրոցների մասին շատ գրուեց պարբերական թերթերում: Այս տարուայ «Մուրճ»-ի մէջ էլ լույս է տեսել Եղիշէ Ժ. Վ. Մուրադեանի «Ո՞վ փակեց Թաւրիզի Լիւլաւ-Թաղի դպրոցները»: Որովհետեւ այդ յոգուածի մէջ մի քանի կէտեր ինձ և իմ տեսչութեան օրով դործող ուսուցչական խմբին են վերաբերում, խնդրում եմ թոյլ տաք և ինձ մի քանի խօսք տակ *):

*) Խնդիրը պարզուած համարելով, չենք տպում այս ընդարձակ պատասխանի մնացած մասը: Ճանկալի է որ անցեալը լաւ դաս լինէր Թաւրիզի հասարակութեան և նոր առաջնորդի համար. երկու կողմերն էլ պէտք է հասունութիւն և տակաւ ցոյց տան ազգային գործերը սահմանադրական ոգւով վարելու:

*) Նոյն պատճառով առաջ ենք բերում յօդուածագրի մի միտք եղբակացութիւնները: